Շառլ Ազնավուր
Արձակ
2019 թվական «Մեղմ շշուկով»
2020 թվական «Վերջին դուռը»

2020 թվական «Քանի սիրտս բաբախում է»

2021 թվական «Հայրս՝ այդ հսկան»

2021 թվական «La Bohème. Անցած օրեր»

Պոեզիա
2022 թվական «Նոր երկիր» Պոեզիա [Մաս I]
2022 թվական «Սեր և պատերազմ» Պոեզիա [Մաս 2]
2023 թվական «Քեզ համար, Հայաստան» Պոեզիա [Մաս 3]
2024 թվական «Ես չեմ հեռանում...» [Մաս 4]

«Մեղմ շշուկով» գիրքը հայալեզու ընթերցողին ներակայացվել է 2019թ.: Այն հրատարակվել է Ֆրանսիայում 2009թ.-ին: Սա ինքնակենսագրական վավերագրական ստեղծագործություն է, որտեղ Ազնավուրը պատմում է կյանքից ստացած դասերի, ճակատագրի հեգնանքի, դպրոցական կրթությամբ ինքնուսի մասին, ով երեք համալսարանի պատվավոր դոկտորի կոչման է արժանանում: Խորհում է Շառլ Կրոյի երաժշտական մրցանակի մասին 20 տարի երազելու և այդ մրցանակից հրաժարվելու մասին:

Ազնավուրն անկեղծ զրույց է բացում ժամանակակից բարքերի, նորելուկ աստղերի, ինքնագովազդի և, իհարկե, սիրո մասին:

Այս գրքի միջոցով նա երիտասարդներին ցույց է տալիս իր անցած ճանապարհը, կիսվում կյանքի փորձով, որը կարող է օգտակար լինել նրանց կարիերայի ճանապարհին:

«**Վերջին դուռը»** լույս է տեսել 2020-ի մայիսին: Այս գիրքը նույնպես բաց երկխոսություն է ընթերցողի հետ: Այստեղ մեծ շանսոնիեն խոսում է իր նոր հանդիպումների մասին, պատմում, թե ինչպես է քվեարկել ընտրությունների ժամանակ, արձագանքել իր մահվան մասին կեղծ լուրերին, ծանոթացել իր կեղծ ազգականների հետ, առաջին անգամ նստել նախագահական օդանավ ու դեսպան աշխատել: Եվ վերջապես հենց այս գրքում առաջին ու վերջին անգամ պատասխանում է հարցին. «Դուք Ձեզ ավելի շատ ֆրանսիացի՞ եք զգում, թե՞ հայ»:

«Քանի սիրտս բաբախում է» ստեղծագործությունը ևս Ազնավուրի կյանքի պատմության շարունակությունն է: Այս գրքում նա պատասխանում է իր անողոք քննադատների ու դեղին մամուլի մեղադրանքներին, պատմում, թե ինչպես ստացավ 2-րդ անձնագիրը և, ի վերջո, ինչու այդպես էլ թոշակի չի գնում: Ազնավուրն իրեն հատուկ ոճով շարունակում է սրամտորեն, ինքնահեգնանքով և հումորով պատմել իր փորձի, հայացքների, ժամանակակից կյանքի մասին իր պատկերացումների, կյանքի, մահվան, սիրո և փողի մասին:

«**Հայրս՝ այդ հսկան**», Շանսոնիեի 4-րդ գիրքն Ազնավուրի առաջին գեղարվեստական ժողովածուն է, որտեղ նրա գրած 16 նովելներն ու պատմվածքներն են, որոնք երգահանը գրել է կյանքի տարբեր փուլերում և հրատարակել 2007-ին: 2021-ին, Ազնավուրի ծննդյան օրը,

ընթերցողի դատին հանձնվեց հայերեն թարգմանությունը: Ժողովածուի մեջ տեղ գտած նովելներն ու պատվածքները լեցուն են անակնկալներով, դրամայով ու երջանիկ լինելու խոհափիլիսոփայությամբ: Ազնավուրն առանձնակի քնքշությամբ է խոսում հոր մասին՝ նրան ներկայացնելով որպես բարի, ամենաքնքուշ, ամենահոգատար մարդու, ով իր համար եղել է սիրո մարմնացում, անչափ ուշադիր մոր նկատմամբ, միշտ պատրաստ օգնել հարևաններին:

Գրքի երևանյան շնորհանդեսին զուգահեռ Փարիզի Օդեոն հրապարակում տեղի է ունեցել Շառլ Ազնավուրի կիսանդրու բացումը:

«La Bohème. Անցած օրեր» 6-րդ հուշագրությունն է, որ Ազնավուրը գրել է 2003 թվականին և որի թարգմանությունը ներկայացվեց հայ ընթերցողին 2021թ.-ի դեկտեմբերի 7-ին: Գիրքը Ազնավուրի վերջին ամենածավալուն ինքնակենսագրականն է, որով եզրափակվում է ազնավուրյան արձակը: Այստեղ ևս Ազնավուրը ընթերցողի հետ կիսվում է իր անցած օրերի բացառիկ հուշերի մանրամասներով, կյանքի ու բեմի կուլիսներում մնացած ամենահետաքրքիր, հուզիչ ու դրամատիկ, զավեշտալի պատմությունների, իր կյանքի կանանց և Նյույորքյան արկածների մասին:

Նոր երկիր. Պոեզիա Մաս 1 Պոեզիայի ժողովածուն Ազնավուրի 1940-2010 թվականներին գրած 500 երգերի տեքստերն են: Հայերեն թարգմանության առաջին մասում ներկայացված է 113 ստեղծագործություն, որոնց մի մասը նրան հաջողություն է բերել, որոշները՝ մեծ աղմուկ բարձրացրել, որոշներն էլ նրան ստիպել են կատարելագործել սեփական ոճն ու մուտք գործել գրական աշխարհ: Կիրք, սեր, դավաճանություն, նվիրում, բաժանում, ինքնասպանություն, խաբեություն, խաղամոլություն, ապաշխարում. Ազնավուրի գրչի համար փակ թեմաներ չկան:

Սեր և պատերազմ. Պոեզիա Մաս 2

Շառլ Ազնավուրի «Սեր և պատերազմը» 1940-2010 թթ. ստեղծած 500 երգերի բանաստեղծությունների ժողովածուի 2-րդ հատորն է, որտեղ տեղ են գտել 118 երգ-բանաստեղծություն: Ժողովածուի մեջ ընդգրկված են հայրենասիրական, սիրային, խոհական բանաստեղծություններ և ապրիլյան քառօրյա պատերազմն ու նրա հետևանքները պատկերող պոեմ:

Քեզ համար, Հայաստան. Պոեզիա Մաս 3

Սա Շառլ Ազնավուրի պոեզիայի ժողովածուի երրորդ հատորն է: Այս հատորում տեղ գտած բանաստեղծություններում սիրո բոլոր դրսեւորումներն են. երգեր՝ նվիրված Հայաստանին, Ֆրանսիային, ընտանիքին և «Տիկին կյանքին»: Այստեղ հատկանշական է առանձնացնել Սպիտակի երկրաշարժից հետո հուսաբեր «Քեզ համար, Հայաստան» հիթը:

Ես չեմ հեռանում... Պոեզիա Մաս 4

Շառլ Ազնավուրի պոեզիայի չորրորդ հատորում ներկայացված են նրա կյանքի վերջին 28 տ
արում ստեղծված երգերը՝ ավելի հասուն ուկատարելագործված ձեռագրով: Այս հատորում է
տեղ գտել նաև հանրահայտ «Երբ սիրում ես ինձ» երգը, որը շանսոնյեի առաջին ու միակ մյո
ւզիքլի30 արիաներից մեկն է «Լոտրեկ» անունով՝ նվիրված պոստիմպրեսիոնիզմի ֆրանսիա
կան հսկային՝ Անրի դը Տուլուզ Լոտրեկին:

Ընթերցողը կծանոթանա Ազնավուր-կառվարենց, Ազնավուր-Լեգրան, Ազնավուր-Տրենե համատեղ ստեղծագործություններին և կբացահայտի քույր ու եղբայր Ազնավուրների գրած «Քնքուշ Հայաստան» երգը:

2024թ. մայիսի 22-ին՝ Շառլ Ազնավուրի 100 ամյակին, Newmag-ը և Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթը հրատարակեցին հոբելյանական երկհատորյակը, որտեղ ամփոփված են հինգ տարիների ընթացքում հրատարակված բոլոր տասը գրքերը:

Շառլ Ազնավուր, Երկերի ժողովածու Հատոր 1

Արձակ

Շառլ Ազնավուրի արձակ ստեղծագործությունների այս լիակատար հատորը ներառում է նրա 5 ինքնակենսագրական գործերը և պատմվածքների ժողովածուն, որոնք հրատարակել է Newmag-ը (2019-2023): Իր հուշերում Ազնավուրն անկեղծորեն խոսում է ընտանիքի, անցյալի ու կարիերայի դժվարությունների, պատմում կյանքի դասերի ու ճակատագրի հեգնանքի մասին: Այստեղ են նաև մաեստրոյի 16 նովելները՝ գրված իրեն հատուկ հումորով և երևակայությամբ: Հայաստան, բոհեմ, սերեր, ընկերներ, Հոլիվուդ. ինչի մասին էլ Ազնավուրը պատմի, միշտ անկեղծ է ու շիտակ, համեստ ու հանդուրժող:

Շառլ Ազնավուր, Երկերի ժողովածու Հատոր 2

Պոեզիա

Պոեզիայի այս ժողովածուն ամփոփում է մաեստրոյի պոեզիայի չորս հատորները՝ «Նոր երկիր», «Սեր և պատերազմ», «Քեզ համար, Հայաստան», «Ես չեմ հեռանում...», որոնք հրատարակվել են առանձին գրքերով: Այս ստեղծագործությունների մի մասը նրան հաջողություն է բերել, որոշները մեծ աղմուկ են բարձրացրել, որոշներն էլ ստիպել են կատարելագործել սեփական ոճն ու մուտք գործել գրական աշխարհ: Կիրք, սեր, դավաճանություն, նվիրում, բաժանում, ինքնասպանություն, խաբեություն, խաղամոլություն, ապաշխարում, զրույց Աստծո հետ. Ազնավուրի գրչի համար փակ թեմաներ չկան:

5-ամյա նախագծի ընթացքում թարգմանվեցին Ազնավուրի ոչ միայն գրական գործերը, այլև նկարահանվեց 6 տեսահոլովակ: 6 տարիների ընթացքում նախագծի շնորհիվ նաև հայերեն է հնչել 6 երգ: Newmag-ը հայաֆիկացրեց, նոր գործիքավորմամբ ու տեսահոլովակով ներկայացրեց Շառլ Ազնավուրի «Մնա», «Տարեք ինձ», «Ով», «Մեռնել սիրելով», «Վենետիկն է տխուր», «Այս կռվի ամնուկները» գործերը: Երգերը կատարել են Սյուզաննա Մելքոնյանը, Էրիկ Կարապետյանը, Անդրեն, Սոֆի Մխեյանն ու Շուշան Պետրոսյանը:

Շառլ Ազնավուրը ծնվել է Փարիզում 1924թ.: Երաժշտական կարիերան սկսել է 1940 թվականին: Առաջին երգը՝ «Ես խմել եմ» (1944), Ժորժ Ուլմերի կատարմամբ, արժանացել է «Տարվա ձայնապնակ» մրցանակին: Շառլի Աստեղային ժամը եկել է 1946-ին, երբ Էդիթ Պիաֆը նրան լսել ու պայմանավորվել է իր հետ տանել ԱՄՆ և Ֆրանսիա շրջագայությունների: Համաշխարհային հռչակ ստացել է 1956-ին, երբ ելույթ է ունեցել Փարիզի «Օլիմպիա» դահլիճում: Ազնավուրը ձայնագրել է 1200 երգ, նկարահանվել է մի քանի տասնյակ ֆիլմերում: 2008-ին ստացել է ՀՀ քաղաքացիություն: Ազնավուրը 9 գրքի հեղինակ է: